Ռափայել Պատկանյան

Ի՞նչ անենք . . .

«Ի՞նչ անենք»... Ամո՛թ այսպես ասողին,
Ամո՛թ, բույր ամոթ հուսահատվողին,
Մա՛հ, մա՛հ, հազար մահ հեք վրհատվողին
Եղբարք, ալ չասենք. «Հայե՛ր, ի՞նչ անենք»:

Ասեք՝ ի՞նչ կանե ջուրը ընկածը,
Ասեք՝ ի՞նչ կանե քաղցած սովածը,
Ասեք՝ ի՞նչ կանե գերի ընկածը...
Եղբարք, ալ չասենք, «Հայե՛ր, ի՞նչ անենք»:

Զըրամույնք ճըգնին քանի ուժ ունին,

Քաղցածը մաշե շեմքը դրացիին,
Փախչել կը հնարի կաշկանդած գերին...
Եղբարք, ալ չասենք. «Հայե՛ր, ի՞նչ անենք»:

Հարուստ, հե՞ր ոսկիդ սընդուկ դըրել ես,
Կըտրիճ, ո՞ր օրվա ուժըդ պահել ես,

Առ ի՞նչ, ազգասեր, ազգըդ սիրել ես...
Եղբարք, ալ չասենք. «Հայե՛ր, ի՞նչ անենք»:

Հարուստ, դիմացդ է ազնիվ ասպարեզ,

Հայրենին լավ է, քան թե ոսկու դեզ,
Թե մեռնիս՝ ոսկիդ հե՞տը կըտանես...

Եղբարք, ալ չասենք. «Հայե՛ր, ի՞նչ անենք»:

Կըտրիճ, ալ կանցնի քանի մի տարի,
Այդ թըշիդ վարդը իսպառ կըխամրի.
Չի թոռմիր միայն հիշատակ բարի...
Եղբարք, ալ չասենք. «Հայեր, ի՞նչ անենք»:

Թե ուզե հայը՝ նա շատ բան կանե,
Կես միլիոն կըտրիճ դաշտը կըհանե,
Տաճկի աթոռը տակնուվրա կանե...
Եղբարք, ալ չասենք. «Հայե՛ր, ի՞նչ անենք»:

Հայը կըստիպե վեհ Պատրիարքին

Հորդորակ սըփռել բոլոր հայ ազգին,
Թոթվել-զարթեցնել մեր թըմրած հոգին...
Եղբարք, ալ չասենք. «Հայեր, ի՞նչ անենք»: